ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան 10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/25.1/4139-16
«26» 05 2016 թ

Ձեր № 282-ի 7
առ 17.05.2016

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի մայիսի 17-ի N 282-ի 7 գրության հայտնում ենք հետևյալը՝

1. Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացվա՞ծ են արդյոք տեղեկություն ստանալու հարցումները. դրանք գրանցվու՞մ են արդյոք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ գրությունները մուտք են արվում «Ընդհանուր» և «Դիմումներ քաղաքացիներից» վերնագրերով: Հարցումների և բողոք-նամակների տարբերակումը ՀՀ էկոնոմիկայի նախարարության քարտուղարության կողմից իրականացվում է համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործավարության կարգի:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Կատարող՝ Անժելինա Չիլինգարյան
011 597212

2. Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ պայմանավորված՝ «Հայաստանի հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված կամ նախարարությանն առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը, ինչպես նաև նախարարության կողմից տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» (կից՝ Հավելված 1, Հավելված 2) ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանը, վավերացվելուց հետո, առաջիկայում կտեղադրվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

Հարգանքով՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ